«ՉԵՌՆՈԲԻԼԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՎԹԱՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՉԵՌՆՈԲԻԼԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՎԹԱՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Սույն օրենքի կարգավորման առարկան Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի (այսուհետ՝ ՉԱԷԿ) վթարի և այլ միջուկային աղետների հետևանքներից տուժած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալական պաշտպանության հետ կապված հարաբերություններն են:
2. Սույն օրենքով նախատեսվող արտոնություններն և փոխհատուցումները տարածվում են սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված քաղաքացիների խմբերի վրա:

Հոդված 2. ՉԱԷԿ-ի վթարից, ինչպես նաև ՉԱԷԿ-ի և այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունը

ՉԱԷԿ-ի վթարի, ինչպես նաև ՉԱԷԿ-ի և այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից և սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերից:

Հոդված 3. ՉԱԷԿ-ի վթարից, ինչպես նաև ՉԱԷԿ-ի և այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում տուժած քաղաքացիների խմբերը

1. Սույն օրենքի դրույթները տարածվում են ՉԱԷԿ-ի վթարի և այլ միջուկային աղետների հետևանքներից տուժած քաղաքացիների հետևյալ խմբերի վրա, ովքեր 1986-1987 թվականներին, այնուհետև նաև՝ 1988-1989 թվականներին՝

1) ԽՍՀՄ-ի զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մասնակցել են ՉԱԷԿ-ի վթարի վերացման աշխատանքներին.

2) կանչվել են հատուկ վարժական հավաքների (զինապարտներ և ներքին գործերի մարմինների աշխատողներ)՝ մասնակցելով ՉԱԷԿ-ի վթարի վերացման աշխատանքներին.

3) մեկնել են աշխատանքային պայմանագրով՝ մասնակցելով ՉԱԷԿ-ի վթարի վերացման աշխատանքներին.

4) մեկնել են կամավորական հիմունքներով՝ մասնակցելու ՉԱԷԿ-ի վթարի վերացման աշխատանքներին:

5) հիվանդացել են ճառագայթային հիվանդությամբ՝ կապված ՉԱԷԿ-ի վթարի, ինչպես նաև վթարի հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու հետ, այն քաղաքացիները, որոնք ճանաչվել են հաշմանդամություն ունեցող անձինք, և նրանց հաշմանդամությունը կապվել է անմիջականորեն ՉԱԷԿ-ի վթարի ազդեցության հետ:

2. Սույն օրենքի իմաստով այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում տուժած անձինք են համարվում նաև՝

1) անձինք (ժամանակավորապես ուղարկված կամ գործուղված), այդ թվում՝ զինծառայողներ և զինապարտներ՝ զորակոչված հատուկ վարժական հավաքների, ինչպես նաև ոստիկանության, պետանվտանգության անձնակազմերի աշխատակիցներ, որոնք 1957-1958 և 1959-1961 թվականներին անմիջապես մասնակցություն են ունեցել 1957թվականին «Մայակ» արտադրական միավորման վթարի հետևանքների վերացման աշխատանքներին.

2) անձինք, ովքեր մասնակցել կամ տուժել են քաղաքացիական և ռազմական նշանակության այլ միջուկային օբյեկտների, այդ թվում՝ ատոմային էլեկտրակայանների վթարներից կամ դրանց հետևանքների վերացման արդյունքում ճառագայթահարվել են:

ԳԼՈՒԽ 2

ՉԱԷԿ-Ի ՎԹԱՐԻՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԱԷԿ-Ի ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 4. ՉԱԷԿ-ի վթարից, ինչպես նաև այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում

տուժած քաղաքացիների բժշկական օգնության և ճառագայթային ազդեցությունից պաշտպանվածության իրավունքը

Սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված քաղաքացիներն իրավունք ունեն բժշկական օգնության և դիսպանսերիզացման առողջապահական կազմակերպություններում: Այդ անձանց մասնագիտացված բուժօգնությունը ապահովում, նրանց հիվանդության և հաշմանդամության պատճառական կապը որոշվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի և ՀՀ առողջապահության նախարարության ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 5. ՉԱԷԿ-ի վթարի, ինչպես նաև ՉԱԷԿ-ի և այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում տուժած քաղաքացիների արտոնությունները

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձինք իրավունք ունեն՝

1) ամենամյա անվճար բժշկական հետազոտման՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ.

2) պետական պատվերի շրջանակում անվճար բուժօգնություն և սպասարկում ստանալու.

3) բժշկի հատուկ դեղատոմսով՝ արժեքի 50% զեղչով դեղերի ձեռքբերման.

4) անվճար առողջարանային ուղեգրերով ապահովման՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով.

5)Հայաստանի Հանրապետության տարածքում անվճար օգտվել պետական ընդհանուր օգտագործման ներքաղաքային ուղևորատար տրանսպորտից (բացառությամբ՝ միկրոավտոբուսների և մարդատար տաքսի ավտոմեքենաների), ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենից.

6) Սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված այն անձինք, ովքեր չեն օգտվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշմամբ սահմանված ամենամսյա պարգևավճար ստանալու իրավունքից, ստանում են ամենամսյա դրամական օգնություն, որի նշանակման, վճարման կարգը և չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2.Անձինք, որոնց հիվանդությունները պայմանավորված են նրանց ծնողների ճառագայթահարված լինելով, նույնպես օգտվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արտոնություններից:

Հոդված 6. ՉԱԷԿ-ի վթարի, ինչպես նաև ՉԱԷԿ-ի և այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում տուժած քաղաքացիների կարգավիճակը հավաստող

վկայականը

ՉԱԷԿ-ի վթարից, ինչպես նաև ՉԱԷԿ-ի և այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու արդյունքում տուժած քաղաքացիների կարգավիճակը հավաստող վկայականները տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 3

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 7. Անցումային դրույթ

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով և 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կարգերը:

Հոդված 8. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ին: